

# Մոնիա, Մոնիա, Մոնիա

## հեղինակ՝ Երուանդ Կոպելեան

Փողաւոր ձայնագրի մեքենայ մը եւ երկու սկաւառակ մէկ կողմը, անկէ անդին մնացեալը միւս կողմը: Մեքենային եւ սկաւառակին կողմը մենք՝ ընկերներով, միւս կողմը՝ ամբողջ աշխարհը՝ իր բոլոր ցաւերով, մտահոգութիւններով ու դառնութիւններով:

Պատանի ենք, կեանքի վարդագոյն քօղը մեր աչքերուն, սրտերուն՝ անհամար յոյսերու եւ սերերու կոկոններ, արեան մէջ հուր մը, որ կ'եռայ, կը բռնկի եւ մեր խումբը՝ փողաւոր ձայնագրի մեքենայով եւ երկու հին սկաւառակներով:

Մեքենան ըսես՝ զի քո է կարողութիւն, սկաւառակներն ըսես՝ պապուս ու մամուս օրերէն մնացած, մենք ըսես՝ կեանքով գինով ու վաղուան հեռանկարով կլանուած: Եւ այնպէս, ամբողջ աշխարհ մը՝ ինքն իր մէջ, վարդագոյն, վարդագոյն, վարդագոյն...:

Երկու սկաւառակի վրայ՝ չորս երգ: Առաջինին վրայ՝ ծանօթ երգչուհի մը — յիսուն տարի առաջուան համար ծանօթ անշուշտ — կ'երգէ երգ մը, որ կը խօսի «երկու սերերու» մասին: «Երկու սեր ունիմ» ելն. կ'ըսէ: Մենք մէկ հատին ետեւէն ենք: Չենք սիրեր այս երգը: Մեզմէ եւ ոչ մէկը կը սիրէ զայն, որովհետեւ երբ աղջիկը «սեր» կ'ըսէ, ձայնը այնքան կը բարձրացնէ, այնքան կ'երկարէ, որ մեքենան կը սկսի տարօրինակ ձայներ հանել, զառիվեր մագլցող 1917 տիպ ինքնաշարժի մը պէս գրեթէ կ'ոռնայ եւ եթէ միջամտելու չըլլանք, առանց խղճահարելու, վստահ եղէք որ կը կենայ եւ կէս կը ձգէ, մեր բերանը կը թխմէ ամենաքաղցր ու յուզիչ սիրային արտայայտութիւններն անգամ, զորս այնքան դժուարութեամբ ու գրեթէ պաղ քրտինք թափելով կը փսփսանք մեր ընկերակիցներուն ականջին:

Մեքենային այս ոտնձգութեանց դէմ հակամիջոցներ ձեռք առած ենք սակայն: Ո՛վ որ մեքենային մօտը կը գտնուի այդ «կրիտիկական մոմենտ»ին, պէտք է իր ցուցամատովը օգնէ անոր, սկաւառակին վրայէն դարձնելով, մինչեւ որ երբեմնի ծանօթ երգչուհին որ այդ օրերուն եթէ չէ մեռած իսկ, կատարեալ պատաւ մը դարձած է անկասկած, վերջացնէ իր «երկու սերեր»ու պատմութիւնը:

Սակայն, այս միջոցառումն ալ յետագային ունեցաւ իր անպատեհութիւնները եւ բոլոր անոնք, որոնք այլեւս գիտէին թէ ե՛րբ կու գայ այդ «կրիտիկական մոմենտ»ը,

կարելի եղածին չափ կը հեռանային մեքենայէն եւ կը պատահէր անխուսափելին: Փողաւոր մեքենան նախ կը սկսէր արտառոց ձայներ հանել, յետոյ երգչուհիին ձայնը արտառոց, անտանելի կը դառնար — նմանեցնելու պէս չըլլայ— գրեթէ շան մը կաղկանձումը կը յիշեցնէր, եւ ի վերջոյ, կ'ընէր իր ամենավերջին ընելիքը, այսինքն՝ կը կենար:

Այս երգին ետեւի կողմը քայլերգ մըն էր, գոր կը նուագէինք երբեմն, երբ կը յոգնէինք ու չէինք ուզեր առանց աղմուկի նստիլ: Այն ատեն, մէկը կը կենար մեքենային գլուխը, քայլերգին սկիզբէն մինչեւ վերջաւորութիւնը, ցուցամատով կը դարձնէր սկաւառակը, քանի որ այլեւս եկած էր ժամանակը, որ պիտակ մը փակցնէինք փողաւոր մեքենային վրայ՝ ըսելով.

«Միայն ցած ու հանդարտ եղանակներու համար, այլապէս՝ դատապարտուած էք լռութիւնը ունկնդրելու»:

Երկրորդ սկաւառակին մէկ կողմը կար տխուր երգ մը, որ մեքենան շատ դիրութեամբ կը նուագէր: Ոչ պոռալ կար, ոչ կանչել: Ցած, հանդարտ, տխուր ձայնով մը, մէկը կ'երգէր կարօտի մասին: Երիտասարդ մը՝ ցած ու կամաց ձայնով մը կ'ըսէր.

«Գարնան՝ ծիծեռնակներու վերադարձին հետ կու լամ, արցունք կը թափեմ դառն / ամրան պայծառ երկնքի տակ, սիրաբանող գոյգերը տեսնելով, արցունք կը թափեմ՝ դառն / աշնան դալկահար տերեւներուն, մելամաղձոտ երկնքին կը նայիմ արցունք կը թափեմ՝ դառն / ամրան քամիին սոյը կը լսեմ ու ձինամարրիկը կը դիտեմ եւ արցունք կը թափեմ՝ դառն / վերադարձի՛ր սիրելիս եւ ժպիտը վերադարձուր շրթներուս...»

Հոս ալ գործ չկար: Շատ լալկան էր: Կը մնար անոր ետեւի կողմը եւ ան լաւ էր, զուարթ էր մնացած մտքիս մէջ, սակայն ասոր պատճառը այն է, որ առաջուց ալ բան մը չէի հասկցած: Միւսներն ալ չէին հասկնար, եւ սակայն, ի՞նչ կարելութիւն ունէր, քանի որ ան ստեպ կը կրկնէր նոյն յանկերգը՝ «Սոնիա՛, Սոնիա՛, Սոնիա՛...», եւ այս այնքան զուարթօրէն, որ կասկած չկայ, թէ միւսներն ալ զուարթ խօսքեր էին, հոգ չէ թէ մենք չհասկնայինք:

Կարելի չէ աւելի խօսիլ փողաւոր ձայնագրի մեքենայի մը եւ երկու սկաւառակներու մասին: Բոլորէն աւելի կը նուագէինք վերջին եղանակը եւ ան կարծէք կարգախօս մը, ուխտ մը եղած էր մեր խումբին մաս կազմողներու համար:

Հիմա, աւելի քան տասնըհինգ տարիներ անցած են այդ օրերուն վրայէն: Ցրուած է խումբը այսօր, ցանուցրիւ եղած: Ամերիկա գացողներ եղան, մեռնողներ եղան, աղջիկներուն մէջ «սանկ նանկ» եղողներ եղան, տղոց մէջ հարստացողներ եղան, երկու կողմէն ալ ամուսնացողներ, հարուստ ամուսիններ գտնողներ եղան:

Ամերիկա գացողները մեր մոռցան, թերեւս իրենք զիրենք ալ մոռցան, մենք մեռնողները մոռցանք, «սանկ նանկ» եղողները երբ որ տեսնենք, երբ որ յիշենք, կը մեղադրենք: Ամերիկա գացողներն ալ եթէ իմանան, անոնք ալ կը մեղադրեն, կ'ամօթեն: Հարստացողները, թէ՛ մեռածի պէս են եւ թէ՛ Ամերիկա գացածի պէս: Անոնք մեզ մոռցած են, մենք զիրենք մոռցած ենք: Ամուսնացողները, մնացեալները, երբեմն քով քովի կու գան, կը խօսին ասկէ անկէ, անցեալէն, ներկայէն, երբեմն ապագայէն:

Երբեմն, երկար ժամանակ, «մերիններ»էն ոչ մէկուն կը հանդիպիմ: Ամերիկայիւնը Ամերիկա է, մեռածը՝ մեռած: Միւսները, հարստացողը, փճացողը, «սանկ նանկ»ը, մեզի հետ քշուող գացողը, ոչ մէկը կը տեսնեմ: Եւ սակայն, այդ բոլորին մասին երբ կը մտածեմ, չեմ խորհիր այնպէս՝ երբ կը հանդիպիմ անոնցմէ ոեւէ մէկուն, որոնցմէ իւրաքանչիւրը կը բարեւեմ տարբեր ձեւով, տարբեր տրամադրութեամբ...:

Ի՞նչ կար այս երգին մէջ, որուն վերյիշումը մարդը կը փոխէր: Ի՞նչ ունէր ան բացառիկ: Ոչինչ: Եւ ի՞նչ կրնայ ունենալ որ...: Անունի մը կրկնութենէն զատ՝ ի՞նչ ունէր որ հասկնալի մեզի համար...: Ոչինչ: Անունի մը կրկնութիւնը լոկ: Այսքան: Բայց, ան, ամէն անգամ մտքիս մէջ կ'արձագանգէ այնքան մաքուր, այնքան անկեղծ, այնքան քաղցր...:

«Սոնիա, Սոնիա, Սոնիա՛»:

Բաժակ մը վճիտ ջուր ես դուն՝ յստակ, անապակ: Այսօր գինով ենք, կեանքի բոլոր կիրքերով ու մոլուցքներով: Երանի՛ այդ օրերուն, ո՞վ երգ, ո՞վ հինուկ մեքենայ, ո՞վ ծերացած, ծերացած ծ սկաւառակներ: Ո՞վ կրնայ տալ այն բաժակ մը անապակ, վճիտ ջուրն այսօր, որուն սիրոյն փշրելիք կեանքի ամենէն արբեցուցիչ հաճոյքներու սրուակներն անգամ:

Եւ...

Ըսե՛մ:

Կ'ամչնամ Աստուծոյ բարեւէն, զոր ամէն հանդիպումի կու տամ անոնցմէ, այսինքն երբեմնի «մերիններ»էն մէկուն ինկածին, ելածին, «սանկ նանկ»ին, մտքիս մէջ միշտ կ'արձագանքէ այդ երգը՝ Կայէնը հալածող աչքին<sup>[1]</sup> նման, բան մը կը հարցնէ ինձի կարծես, կ'ամբաստանէ զիս, կ'ամբաստանէ բոլորս, կ'ամբաստանէ եւ կեանքը...

«Սոնիա, Սոնիա, Սոնիա...»:

Դուն միշտ մաքուր պիտի մնաս: Դուն եւ հինուկ, փողաւոր ձայնագրի մեքենան...:

Եւ նոյնիսկ լալկան կարօտի երգը եւ զառամած երգչուհիին «երկու սերեր»ը...:

«Սոնիա, Սոնիա, Սոնիա...»:

Հեռացի՛ց մտքէս, ո՛վ երգ, հեռացի՛ր, գնա՛, որովհետեւ հոն քու տեղդ չէ այլեւս:  
Դուն միշտ մաքուր մնալու ես:

Մենք կ'երթանք, կը հեռանանք, կը հեռանա՛նք, կը կորսուինք անվերադարձ  
ճամբաներուն մէջ կեանքին, փոշերթաթախ, քրտնաթոր, պարտասուն: Արձագանգդ կը  
հեռանայ օրէ օր, կը մարի, կը մարի...:

Մե՛նք ենք որ կ'երթանք, ո՛վ երգ, կը հեռանանք օրէ օր, քեզմէ, այդ բաժակ մը  
անապակ, վճիտ ջուրէն, օր մ'ալ մեր ականջները փակելու համար բոլոր երգերուն,  
երթ նոյնիսկ դո՛ւն վերադառնաս...»:

«Սոնիա, Սոնիա, Սոնիա...»:

Ինչո՞ւ այդքան մաքուր ես դուն:

Մարմարա

12.03.1955

• ↑ Կայէնը հալածող այք — ակնարկ՝ Ֆրանսացի նկարիչի մը պաստառին,  
որու մէջ դատաւորը՝ Արարիչը պատկերացնող խոշոր այք մը կը հետապնդէ  
եղբայրասպան Կայէնը: